ցեաց մերոց հաստատուն ընդ հայք . 15 թօփ
Վերջ բարի հանգստութիւն հրաւիրեալ եղբարց. . . . . 13 թօփ

Եւ ապա յոտս կացցեն զոհութեամբ ելցեն ամենեքեան առ տունն իւրեանց, և ընթրիսն յիրիկուան հանդարտ և խաղաղութեամբ ոչ երբէք յաւելորդութիւն ըմպելոյ, և ոչ այլ ինչ համարձակաբար խրախճանութիւն և ոչ ումեք կենաց յաղագաւ ըմպել և ոչ թօփ վառել բայց հեզ և խոնարհ և մեղմ շարժմամբ, ամենայն այր ջանայ ծառայել կանանց Օգնական նոցայ լինիլ սրբութեամբ ուտացանել և ըմպել նոցայ քիչ գինի ջրով խառնեալ, և տալ տեղի նոցայ լսել ձայն երգոց տաղուաց և նուագարանաց, և կաքաւել հեզութեամբ և ամօթխածութեամբ և միաբան ուրախ լինիլ 'ի առաքինութիւնս իւրեանց մինչև բոլոր գիշերն եթէ կամին, և իւրաքանչ ոք ազատապէս կարէ ելանել առ տունն իւր որում ժամի որ ինքն կամի։

ԳԼՈՒԽ ՅՀԵ.

Ուր ոք տան որ լինիցի կին յոր 'ի ժամ ծնանելոյ նորայ հարկաւոր է հրաւիրել քահանայ ոմն զի բերցցէ ընդ իւր սրբազանագործիք մկրտութեան դրոշմի և հաղորդելոյ հանդերձ սուրբ աւետարան խաչիւ և այլ հարկաւոր զգեստիւք